

Այս հեռագրին հասնելուն վրայ, բէտիֆներու տեղական վաշտը ղէնքի տակ կանչուած և հապճեպով զրկուած էր, հանգստեան կոչուած տարիքոտ սպայի մը հրամատարութեան տակ: Սակայն վերջ ի վերջոյ հասկցած էին այս 5000 հայերու առտապելին էութիւնը: Խնդիրը կը յանդէր յիսնակ մը գնչուներու վերայ, որոնք հոնկէ կ'անցնէին, ինչպէս ամէն տարի սովորաբար: Ահաւասիկ պատճառը բոլոր այս վիճուկներուն . . . :

Պայմազամին հեռագիրը տեղի տուած էր զօրակոչի մը և Գոնիայի իսլամներուն միջեւ գրգռութեան մը՝ Հայերուն դէմ:

Բռնապետութեան ուրիշ կուսակիցներ, ինչպէս Հաճընի միւֆթին և իր զաւակները Ահմէտ, Ճէվտէթ և Իզզէթ էֆէնտիները, հարցաքննիչ-գատաւորի փոխանորդ Սապրի էֆէնտի, և Գօղանի (Սիւ) նախադատ առենի անդամ Հիւսէյին էֆէնտի՝ սանձարձակ կ'երպով ղէմ յայտարարուած են Սահմանադրութեան և Հաւասարութեան դէմ, և բացայայտօրէն ժողովուրդը դժուարած են քեաֆիրները սպաննել և իրենց ինչքերուն տիրանալ: Այս գէպքը սպառնացուած է Ատանայի պատժական դատարանը գտնուած թռուցիկ-կոչերով:

Հրապարակաւ միեւնոյն ուղղութեամբ պրոպականտ մը եղած է Պաղչէի նախորդ միւտիրին կողմէ:

Բացայայտ է որ այս արուեստական գրգռութիւնները հոս ու հոն տեղի տուած են հայկական ջարդերու սկզբնաւորութեանց: Օրինակ, Էշճար-Ուշազրի մէջ սպաննուած են Հաճընցի երեք Հայեր. Քարսի բուռած ուրիշ գիւղի մը մէջ ուրիշ երկու Հայեր սպաննուած են, յետոյ յօշոտուած և այրուած:

Այս ոճիրներու հեղինակները առանց այլեւայլի իրենց արարքը խոստովանած են իբր պատճառ ցոյց